

Ի Վ Ա Ն Թ Ո Ւ Ր Կ Ե Ն Ե Վ

Յ Ա Ղ Թ Ա Կ Ա Ն Ս Ի Ր Ո Յ Ե Ր Գ Ը

(Նար.)

Դ.

Վալերիան չկարողացաւ անմիջապէս քնննալ. իր արեան մէջ, հուշողութիւնն ու թոյլ մի տենչ կար, եւ իր ականջներում մի թեթեւ դռնչիւն... այն տարօրինակ գինիից, որպէս նա ենթադրում էր. եւ գուցէ նաեւ Մուծծիօի պատմութիւններէն եւ ջութակով նուագումից... Առաւօտեան դէմ նա վերջապէս ընկաւ քունի մէջ, եւ մի արտաքոյ կարգի երազ տեսաւ:

Նա երազեց, որ մտնում էր մի ընդարձակ սենեակ, ցած առաստաղով... Մի այդպիսի, սենեակ, իր կեանքում բնաւ տեսած չէր. բոլոր պատերը ծածկուած էին քառակուսի փայլուն ազիւններով որոնց վրայ գծեր կային: Բարակ քանդակուած ալապատրէ սիւները իրենց վրայ կրում էին մարմարեայ առաստաղը, առաստաղը ինքն իսկ եւ սիւները կէս - թափանցիկ էին թւում... մի գունատ վարդագոյն լոյս բոլոր կողմերից թափանցում էր սենեակի մէջ, նետելով մի խորհրդաւոր եւ միօրինակ շող բոլոր առարկաների վրայ: Ոսկեհուն ասեղնագործուած բարձեր գրուած էին մի նեղ գորգի վրայ, տախտակամածի ճիշդ մէջտեղում, որը ողորկ էր ինչպէս մի հայելի:

Անկիւններում, գրեթէ անտեսանելի,

ծխում էին բարձրաբերձ խնկամաններ՝ հրէշային անասունների կերպարանքով: Ոչ մի տեղում պատուհան չկար. մի դուռ առկա, թաւիշեայ վարդոյրով, անշարժ եւ լուռ մնում էր պատի մի առանձնացեալ խորշում: Եւ յանկարծակի, այդ վարդոյրը կամաց կամաց սահեց, շարժուեց դէպի մէկ կողմ... եւ նրա միջից դուրս եկաւ Մուծծիօն: Նա գլուխ խոնարհեց, բաց արեց իր բազուկները, ծիծաղեց...: Նրա մսկեգին բազուկները գրկեցին Վալերիայի մէջքը, նրա խոնձող շրթները կիզեցին նրա ըովանդակ մարմինը...:

Նա ընկաւ դէպի ետ բարձերի վրայ:

Երկար պայքարից յետոյ. սարսափից հեծելով Վալերիան գարթնեց: Տակաւին անիրազեկ լինելով թէ ո՛ւր էր գտնուում և ի՞նչ էր պատահել իր հետ, նա անկողնի վրայ ելաւ նստաւ ու նայեց իր շուրջը:

Մի սարսուռ անցաւ իր ամբողջ մարմնի վրայից...: Փաբիօն պռոկել էր իր կողքին: Նա քնած էր, բայց նրա դէմքը, պատուհանից ներս նայող փայլուն լիալուսնի լոյսով, երեւում էր գիւղի նման գունատ...: Նա աւելի տխուր էր, քան մի մեռած գէմք: Վալերիան գարթեցրեց իր ա-

մուսնուն էե ուղիղ նայեց նրան, «Ի՞նչ է պատահել», բացազանչեց Ֆաբիօն: «Ես, ես, մի զարհուրելի երազ տեսայ», փսփսաց Վալերիան տակաւին ամբողջ մարմնով գողալով: Բայց այդ վայրկեանին, տաղաւարի ուղղութեամբ, գալիս էին երեքուն ուժեղ ձայներ, եւ Ֆաբիօն ու Վալերիան երկուսն էլ ճանաչեցին այն մեղեդին, որ Մուծծիօն նուագել էր նրանց համար, կոչելով նրան «երանաւէտ յաղթական սիրոյ երգը»:

Ֆաբիօն անձկութեամբ նայեց Վալերիային... վերջինս փակեց իր աչքերը եւ դարձաւ մէկ կողմ... ու երկուքն էլ իրանց շունչը բռնելով լսեցին երգը, մինչեւ վերջաւորութիւնը:

Մինչդեռ վերջին նօթը մեռնում էր, լուսինը անցաւ մի ամպի ետեւ, որից յետոյ, յանկարծակի, սենեակը մթապնեց...

Երկու երիտասարդ անձերը, իրանց գլուխները խորասուզեցին բարձերի մէջ, առանց փոխանակելու մի խօսք. և նրանցից ոչ մինը չնկատեց՝ ե՛րբ միւսը քնի մէջ ընկաւ:

Ե.

Յաջորդ առաւօտը Մուծծիօն նախաճաշի եկաւ: Նա երեւում էր երջանիկ եւ ողջունեց Վալերիային զուարթօրէն: Վալերիան պատասխանեց նրան շփոթութեամբ. գողունի մի ակնարկ ուղղելով նրան, — եւ ահաբեկուած զգաց իրան՝ տեսնելով նրա պայծառ, երջանիկ դէմքը ու նրա խորաթափանց, խուզարկու աչքերը: Մուծծիօն սկսում էր նորից մի ինչ որ պատմութիւն ասելու... բայց Ֆաբիօն ընդհատեց նրան հէնց առաջին խօսքից:

«Ես տեսնում եմ, որ դու չես կարողանում քնել քո նոր կայանում: Կի՞նս եւ ես լսեցինք, որ նուագում էիր երէկ գիշերուան երգը:»

«Այո՛, լսեցիք դուք, ասաց Մուծծիօն, ես, արդարեւ, նուագեցի այն կտորը, բայց

դրանից առաջ, ես քնել էի, ու տեսել մի զարմանալի երազ էլ:

Վալերիան լարուած լսում էր: «Ի՞նչ տեսակ երազ» հարցրեց Ֆաբիօն: «Ես երագեցի, պատասխանեց Մուծծիօն, առանց իր աչքերը վերցնելու Վալերիայի վրայից. թէ մտնում էի մի ընդարձակ յարկաբաժին՝ արեւելեան ձեւով զարդանկարուած առատաղով. քանդակուած սիւները պահում էին առիքը, պատերը ծածկուած էին քառակուսի փայլուն աղիւսներով, եւ թէեւ ոչ պատուհաններ ոչ էլ ճրագներ կային, ամբողջ սենեակը լեցուած էր մի վարդագոյն լոյսով, ճիշդ այնպէս, որ կարծես թէ ամբողջը կառուցուել էր թափանցիկ քարերից: Անկիւններում, չինական խնկամաններ ծխում էին. տախտակամածի վրայ գետեղուած էին ոսկեհուն ասեղնապօրծուած բարձեր, մի նեղ գորգի վերեւ: Ես ներս մտայ մի դռնից, որ ծածկուած էր մի վարագոյրով, եւ դէպի մի ուրիշ, ճիշդ հանդիպակաց դռնից երեւեցաւ մի կին, սրին ես ասեսով սիրել էի: Եւ նա ա՛յնքան գեղեցիկ էր երեւում ինձ, որ ես ամբողջութեամբ բոցավառուում էի իմ հինօրեայ սիրով...»:

Մուծծիօն նշանակալից կերպով ընդհատեց: Վալերիան նստած էր անշարժ, եւ աստիճանաբար դառնում էր գունատ... ու քաշում էր շունչը աւելի կամաց: «Ապա, շարունակեց Մուծծիօն, ես զարթնելով նուագեցի այն երգը»:

«Բայց ո՞վ էր այն կինը», ասաց Ֆաբիօն:

«Ո՞վ էր նա: Մի Հնդկիկ կինը: Ես հանդիպեցի նրան Դէլհի քաղաքում... նա այժմ չի տպրում, մեռած է:»

«Եւ նրա ամուսի՞նը», ասաց Ֆաբիօն, առանց իմանալու թէ ինչո՞ւ տուաւ այդ հարցումը:

«Նրա ամուսինը, նոյնպէս, ասում են, որ մեռել է: Ես շատ չանցած, նրանց երկուսին էլ հետքը կորցրի:

«Տարօրինակ է, նկատեց Ֆաբիօն, իմ

կինն էլ երէկ գիշեր մի արտաքոյ կարգի երազ էր տեսել...

Մուծծիօն մի դիտաւորեալ ակնկառոյց նայուածք ուղղեց վալերիան.

— «... Որի մասին նա ինձ ոչինչ չի ասել» — աւելացրեց Ֆաբիօն:

Բայց այս միջոցին, վալերիան ոտքի ելելնով սենեակից գնաց դուրս: Նախա-

ճաշից անմիջապէս յետոյ, Մուծծիօն նոյնպէս մեկնեցաւ, բացատրելով որ ինք գործով պէտք է Ֆէրրարա գնար եւ թէ երեկոյէն առաջ չի վերադառնայ:

Թարգմ. Պ. ՇէֆէրՉԵԱՆ

(Շարունակելի)

Ք Ո Ւ Չ Ա Կ Ե Ա Ն Ա Ն Տ Ի Պ Տ Ա Ղ Ե Ր

(Շար.)

Իմ եար, քեզ վատ չեմ ուզեր, դու ինձի էր՝ ես խրոտվեր.
Զայդ սուտ խըռովըդ իսկի մարդ սրտէն չի հաներ (1).
Արեւն ի մօրէն ելնու՝ վերայ քո ղէն եմ կամեցեր (2):
Քո սէրն ի ծրծում՝ նըման հաւասար ոսկերքս է ցրուեր.
Զըղեղն ոսկրէն ո՞վ եհան, չոր (3) ոսկորն ի հողն է փտտեր,
Փտտի (4) ու թաւալ առնու, հասարաթն իւր սիրտն է մնացեր:

Ո՞վ ի՞նչ սիրելիս, քեզի երբեք գէշութիւն չեմ ուզեր, դու ինձի ինչո՞ւ ես սրդողեր.
Ատիկա սուտ սրդողիլ ձրն է, սրտանց չի կրնար ըլլալ:
Աճէն հեղ որ արեւը ձորմէն ծագեր է, ուզեր ե՞մ որ քո՛ւ վրայ ճառագայթէ:
Քու սէրդ ինչպէս ծուծ բոլոր ոսկորներուս ձէջ տարածուեր է.
Մուծը ոսկորէն ո՞վ կրնայ հանել. չոր ոսկորը հողին ձէջ կը փտտի,
Կը փտտի ու կը թաւալի, նորէն սիրոյ տեսնն անոր խորը կը մնայ:

(1) Այս վեցեակը կը գտնուի միայն Ա. օրինակին (Տէվէնտանի) մէջ. Ձեռ. Այս տողին մէջ երկու վանկ կը պակսի. Ենթադրական Թարգմանութիւն մըն է որ տուինք:

(2) Ձեռ. կամեցել:

(3) Ձեռ. ջորս:

(4) Ձեռ. փթտի:

Այս վեցեակին մէջ առաջին տողը գրեթէ նոյնութեամբ կը գտնուի արդէն տպուած